

ՐԱՖՖԻ—ՀԱԿՈՐ ՄԵԼԻՔ—ՀԱԿՈՐՅԱՆ
(ծննդյան 150-ամյակի առթիվ)

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ազգային գրականությունների պատմության մեջ առանձնանում են դեմքեր, որոնք իրենց հասարակական ու գրական գործունեությամբ համահավաքում են ազգի մտածողությունը, հոգեբանությունը, գոյության ու մաքառումի ծրագրերը, հարյուրամյակների հեռանկարում դիրքորոշում մարդկանց, պարզում նրանց երազանքների ու իդեալների իրացման ուղիները, միասնացնում և առաջ տանում քաղաքական ու սոցիալական զարգացման դժվարին ուղիներով:

«Րաֆֆու համար քիչ է գալիս «գրող» մակդիրը», — մի առիթով նկատել է Պարույր Սևակը: Իրոք, քիչ է ասել թե Րաֆֆին մեծ գրող էր, գեղարվեստական սքանչելի տաղանդ: Նա ապրեց իր կյանքը իբրև մի մարդ, որ գալիս էր հեռուններից՝ հնօրյա Հայաստանի ճանապարհներն անցած մեծ ուխտավորի նման և քայլում էր ներկայի մեջ որպես ապագայի քաղաքացի: Նրա հզոր տաղանդը տեսնում էր ամեն ինչ. նա գիտեր իր երկիրը, ժողովրդին. նրա հայացքը ընդգրկում էր ազգն իր հավաքական ամբողջության մեջ: Նա նորից հայտնաբերեց այն՝ դարերի, երկարատև մաքառումների, արյան ու կոտորածների մեջ իրեն, իր սահմանները, մարդկանց, դաս ու դասակարգերը կորցրած Հայաստանը: Փաստորեն, Րաֆֆու ստեղծագործության մեջ առաջին անգամ ազգ ու ազգայնություն, երկիր ու հող, գյուղացի ու մտավորական երևացին ամենալայն փոխկապակցությունների ու շարժման մեջ: Րաֆֆին հայ ժողովրդին ցույց էր տալիս նրա ուժ լինելը, մշակում ազգային ինքնաճանաչում, մզում հոգևոր ու բարոյական վերածննդի:

Նա կոչված էր մեծ առաքելության:

Մնվել է 1835 թվականին Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ հայաբնակ գյուղում: Հին Փայաջուկը գավառի նշանավոր գյուղերից էր: Մառաստաններով հարուստ, ջրգ, բամբակագործությամբ հայտնի Սալմաստի այդ անկյունը, մանուկ Հակոբի երազանքների օրրանն էր: Ծրկհարկանի, լայն պատշգամբով ընդարձակ տանը, ուր երբեմն հյուրընկալվում էին երկրից անցնող ճանապարհորդները, նշանավոր մարդիկ, վաճառականներ՝ ուղտ ու ձիերի, սայլերի ու կառքերի ուղեկցությամբ, միշտ էլ եռուզեռի մեջ էր: Մելիքական հարկի տակ մարդիկ իրենց զգում էին ապահով ու պաշտպանված, մանավանդ Մելիք-Միրզայի հյուրասեր ու բաց սեղանը չեմոսցնում էր սրտերը, և ով մի անգամ վայելել էր բազմամարդ գերդաստանի հյուրասիրությունը, այլևս անմոռաց էր մնում Մելիք-Միրզան, գավառի այդ նշանավոր հայր՝ հաջողակ ու ձեռներեց վաճառական-կալվածատերը: Միայն հյուրասիրությունը չէր, որ այս դեպքում կանչում էր մարդկանց: Մելիք-Միրզան, ըստ երևույթին, այցելուներին մտերմացնում էր «հայոց հոգսի» ճանաչումով ու կողմնորոշումների մեջ դրած ազգասեր պատվախնդրությամբ: Նրա տանը վճռվում էին ջատ հարցեր՝ գյուղական վեճեր, հայ-պարսիկ փոխհարաբերությունների կնճռոտ խնդիրներ, ժառանգության և ունեցվածքի բաժանումներ, կնքվում ջիլայի (կտավի) առևտրի հետ կապված գործարքներ:

Րաֆֆին «հանդուգն և ջատ սրամիտ» մի մանուկ էր, երբ սկսեց հաճախել Փայաջուկի գյուղական դպրոցը: Սաղմոս, ավետարան, նարեկ, փոքր-ինչ քերականություն սովորելով, նա շուտով առաջադիմեց ուսման մեջ այնքան, որ

հարկ եղավ մտածել նրան որևէ կանոնավոր ուսումնարան ուղարկելու մասին: Հայրը որոշել էր Թիֆլիս տանել: Տասներկու տարեկան հասակում նրան բերում են Թիֆլիս և հանձնում ժամանակի նշանավոր հայկարան Կարապետ Բելախյանցին: 1852-ին ավարտելով Բելախյանցի դպրոցը՝ պատանի Հակոբը ընդունվում է Թիֆլիսի ռուսական գիմնազիան, ուր չորս տարի սովորելուց հետո, անավարտ թողնելով ուսումը, վերադառնում է Փայաջուկ՝ հոր առևտրական գործերին տեր կանգնելու: Մելիք-Միրզան ծերացել էր, և հիմա նրան ոչ միայն օգնական, այլև փոխարինող էր պետք:

Մեծահարուստ երիտասարդը Սալմաստ էր ոտք դնում գործունեության որոշակի ծրագրերով: Թիֆլիսյան կրթությունը նրան շատ բան էր տվել. նա ոչ միայն գրական ճաշակ ու դաստիարակություն էր ստացել, որոշ գրելափորձեր արել, ծանոթացել ռուս և անտիկ գրականության մեծերին, հետևել հայկական մամուլին, այլև՝ տեղեկացել ռուս-թուրքական և ռուս-պարսկական հարաբերություններին պատմությանը, հասկացել, թե ինչ է կատարվում Անդրկովկասում և քաղաքական ինչ ապագա ունի հայ երկիրը՝ ռուսական տիրապետության ներքո:

Նա, իհարկե, իրեն պարսկահայի նման էր պահում և, հասնելով Պարսկաստան, միանգամայն որոշ պատկերացնում էր, թե ինչ է լինելու իր անելիքը Սալմաստում: Կա ժամանակակցի վկայությունը. «Երիտասարդ Բաֆֆին իր տան գործերը կարգի բերելուց հետո, սկսեց զանազան դպրոցների և հասարակական օգտակար հիմնարկությունների ծրագրերն էր կազմել Սալմաստի մի քանի հայաբնակ գյուղերի համար, և պահանջում էր, որ դրանք անհապաղ գործադրվեն»¹: Պարսկահայ միջավայրը լավ գիտենալով, երիտասարդ մտավորականը, որ հիմա վաճառատուն էլ ուներ Դիլմանի² շուկայում և շփվում էր ինչպես շրջակա գյուղերի առևտրականների, այնպես էլ գյուղացիների հետ, հասկանում էր, որ գործը պետք է սկսել դպրոցների հիմնադրումից, լուսավորության տարածումով հասնել երիտասարդության, մատաղ սերնդի գիտակցության, բարքերի, սովորույթների վերափոխմանը, ասիական հետամնացության հաղթահարմանը:

Նա սկսեց հայրական տնից. «Փոփոխության ենթարկեց իրանց տան ապրուստի ու հագուստի ձևերը, եվրոպական եղանակով կահավորեց իր պարապմունքի սենյակը... մի ճոխ գրադարան կազմեց»³: Ապա անցավ Սալմաստի հայաբնակ գյուղերում իր ծրագրի իրագործմանը: Ինչպես վերհիշում է Ավ--թանդիլյանը, Բաֆֆին միայնակ էր գործում: Դպրոցներ և ռեանալան հասարակական օգտակար հիմնարկություններ հիմնադրելու համար նրան պետք էին ոչ միայն օգնականներ և համախոհներ, այլև՝ հեղինակություն, որ չունեի: Նա երիտասարդական ոգևորությամբ և անխոհեմությամբ էր վարվում և շատ հաճախ դեմ առնում գյուղական առևտրականների շահասիրությանը և գյուղացիների անտարբերությանը: Ժողովրդասեր գործիչների նման, նա փորձում էր խավարը լուսավորել սեփական ճրագով, որ այս դեպքում միայն լուսավորում էր սեփական անձը: Բաֆֆու ծրագրերը տապալվեցին, և նա իր դեմ հանեց Սալմաստի մեծահարուստներին և հետադիմականներին: Նրա «...սուղորական գյուղական ահագին տունը և կարողությունը քարուքանդ» արվեց: Խուփը դեմ առավ քարին, որովհետև սերմը ընկնում էր ապառաժի վրա:

Այսպես, քաշվելով «ազգային հրապարակից», Բաֆֆին ձեռնամուխ եղավ այս անգամ ավելի կարևոր և ավելի իրագործելի մի ծրագրի՝ հայրենի երկրի ուսումնասիրությանը: «Պետք է ասած, — մտաբերում է Ավթանդիլյանը, — որ գրեթե ընդմիջտ Բաֆֆիի մտազաղափարն էր թուրքահայաստանը: 1857 թ. անցնելով թուրք-պարսկական սահմանը, որպես ուխտավոր, նա ճանապարհորդեց Արևմտյան Հայաստանում՝ Վասպուրական ու Տարոն, գնաց հասավ Մուշ ս. Կարապետի վանքը: Այս ճանապարհորդությունը նրան տվեց հայրենի երկրի խոր ճանաչողություն: Երևի հենց այստեղից էլ սկիզբ առան նրա գրա-

1 Ա. Ավթանդիլյան, Պատկերներ Բաֆֆիի կյանքից, Ալեքսոլ, 1904, էջ 13:

2 Փոքրիկ գյուղաքաղաք էր Սալմաստի գավառում:

3 Ա. Ավթանդիլյան, նշվ. աշխ., էջ 13:

կան մեծ ծրագրերը, որ հետո իրականացնում էր՝ ժամանակ առ ժամանակ դիմելով հիշողությանն ու երևակայությանը:

Ճամփորդության արդյունքը «Ախթամարա վանքը» ուղեղնացական ակնարկն էր, որ տպագրվեց 1860 թ. «Հյուսիսսահայկում»: Ինչպես երևում է Ստեփանոս Նազարյանցը թողել էր այդ ակնարկի վրա (և բավական նկատելի) իր գրչի և մտածության հետքերը: Այնուամենայնիվ, 23-ամյա Բաֆֆու տպագրած առաջին ծավալուն գործը երևան է հանում նրա ժողովրդասիրական մտքերի ու համոզումների ընթացքը: «Գնացե՛ք ժողովրդյանը մեջ»,— հանձնարարությամբ Բաֆֆին տալիս էր այն ժամանակ, երբ իսկապես դեռ նոր միայն արթնանում էր քնած ժողովուրդը դարավոր նիրհից: Լուսավորությամբ ազգային կարիքները հոգալու և ժողովրդի դրությունը բարվոքելու այդ նույն պահանջներին նա ավելացնում էր իր կրթոտ ու անվարան համոզումը. «Մի մարդ կամ թե ազգ,— գրում էր նա,— որ խավարի ու տգիտության մեջ է, ... նորա կյանքը ստրկության և ծառայության մեջ է»⁴: Ուսումնարանը դուրս հանել «վանքերի պատերի միջից» և ի սպաս դնել ժողովրդին՝ երկիրը դարձնելով «հասարակաց կրթության և լուսավորության տուն»— ահա ծրագիրը: Ազգը պետք է ուկնդիր լինի այն «ղարթուցանողական ձայներին», որ լսելով սթափվի «յուր մահահրավեր թմրութենից»:

Հենց այդ շրջանից և գուցե դրանից առաջ էլ Բաֆֆին որդեգրվել էր «ինքնաքննական» ուղղությանը, որ որպես դիրքորոշում և ժողովրդասիրական գործունեության ձև հանձնարարվել էր դեռևս 1840—50-ական թվականներին ն. Արտվանի և Մ. Թաղիադյանի «ղարթուցանողական» ձայներին ունկնդիր երիտասարդությանը: Մ. Նալբանդյանը և Ս. Նազարյանցը ինքնաքննական ուղղությանը նոր ոգի և իմաստ ներշնչեցին: Նրանք առաջ բերին ազգի ցավերն ու հոգսերը ճանաչելու աննախընթաց մի շարժում, որ իր գաղափարաբանական ուղղվածությամբ՝ լուսավորականության (հետևաբար և նոր ազգային զարթոնքի) հետ էր կապվում, բայց և մյուս կողմից երևան հանում համազգային փրկության ուղիների շուրջ երիտասարդ հայ գործիչների ամենառադիկալ մտածումներն ու ծրագրերը: Այստեղ է, որ, միանալով Մ. Նալբանդյանին, Բաֆֆին այդ «պաշտելի տղամարդի» օրինակն առնելով, շտապում էր հասկանալ ու ըմբռնել նրա անցած ճանապարհի իմաստը:

Նախական Պարսկաստանի, սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի ծայրագավառներում տեղադրված հայ երկիրը նրան ներկայացավ իր անցյալ ու նոր պատմության ամենաբարդ հարցերով ու խնդիրներով: Ճամփորդությունից վերադառնալուց հետո, Բաֆֆին ավելի հստակ էր պատկերացնում այն դրությունը, որ ստեղծվել էր երեք պետությունների միջև բաժանված իր հայրենիքի և ժողովրդի համար: Անհույս մի բան կախվում էր նրանից, բայց շուտով արթնանում էր հավատը գալոց օրերի հանդեպ:

Խորապես ճանաչելով հայրենի երկիրը, տառապանքի ու արյան ճանապարհներն անցած իր ժողովրդին, նա որպես մարգարե ու քարոզիչ պարզեց ազգային փրկության հավատի դրոշմը, որ փողփողում էր հեղափոխական ցընծությամբ: Պետք է ոչ միայն արթնացնել, այլև կազմակերպել ժողովրդին, տալ նրան ապրելու հավատ և ազատագրվելու հույս: Այսպես էր մտածում Բաֆֆին, երբ 1867-ին վերամշակում էր իր առաջին վեպը («Սալբի»), որ գրել էր տակավին երիտասարդ հասակում, թիֆլիսյան ուսումնառության տարիներին (1855): Նույն 1867-ին «Սալբի» համար նա գրեց «Հառաջաբան», որ XIX դարի 60-ական թվականների հայ հասարակական մտքի կարևոր փաստաթղթերից է:

Ճաստամյա մի ժամանակամիջոցում (1857—1867) Բաֆֆին, թեև զբաղված վաճառականական գործերով, հասցրել էր շափազանց շատ բան կարդալ, հասունանալ խորքից, դիտել հայրենիքի ճակատագիրը XIX դարի համաշխարհային-պատմական իրադրության ֆոնի վրա և, որ ամենակարևորն է, հաս-

⁴ Բաֆֆին, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1957, էջ 284:

⁵ Նույն տեղում, էջ 285:

կանալ Եվրոպայում, Ռուսաստանում և Ամերիկայում կատարվող ազգային կոնսուլիդացման պրոցեսի ճակատագրական նշանակությունը մարդկության ապագա զարգացման համար: Բաֆֆին հատուկ քննում է այս հարցը և հենց դրա լուծման հետ կապում հայ ազգի գոյատևման և ազգային վերածննդի բոլոր հարցերը: «Մեզ թվում է, — գրում էր նա, — թե մոտ է այն բարեբախտ ժամանակը, երբ ազգայնության խնդիրը կնգունե յուր վճռական լուծումը, և ազատությունը, արդար օրենքն ու իրավունքը, որ կրոնքները չկարողացան աշխարհ բերել, պիտի ներս մտնեն մարդկային կյանքի մեջ քաղաքակրթության ու լուսավորության ձեռքով: Ահա այդ է մարդկության բարեկամների ցանկացած սակեղեն զուրը, երբ բռնաբարությունը կվերջանա, գերի եղած ազգերը ազատություն կգտնեն, ու նոցա կորուսած ժառանգությունքը յուրյանց կդառնան, և այնուհետև ոչ մի ազգ չի համարձակվի ավերելու մյուսի հողի սահմանները»⁶: Ինչի՞ վրա էր հենում գրողը հավատի ու հույսի այս նշանակալից մտասկզբում: Նա համոզված էր, որ 19-րդ դարի «լուսավորյալ քաղաքակրթությունը», այնուամենայնիվ, անցնելու է ասիական երկրների վրայով, և Ասիայում էլ, հաստատվելու են Եվրոպայից բերված «ազատ գաղափարները»: Բաֆֆին հավաստում էր, որ «Վոլթերի, Բուխենբերի, Ֆեյերբախի, Ռուսոյի, Լուի-Ալանի, Պրուդոնի, Կաբեի և լուսավոր գարուս այլ մեծամեծ մտածողների փիլիսոփայությունը լսելի են լինում պարսկական բարբառում»⁷: «Ահա այսպիսի կայծեր են ընկած իսլամի կազմվածքի մեջ»⁸: Եթե Պարսկաստանի ներկա շահը՝ Նասեր էդ Դինը իր նախորդների նման կառավարի երկիրը, ապա Պարսկաստանը «...կվերանորոգվի ինքնուրույն՝ առանց նայելու օրևից տիրապետողի կամփին: Արդեն Պարսկաստանի արշալույսը սկսել է շառագունել, և արևի ծագումը արդեն գուշակվում է...»⁹:

«Ոսկեդեն դարի» այս պատկերացումը, որ հենվում էր «ազգայնության խնդրի վճռական լուծման»՝ այսինքն հեղափոխական ուղեգծի պաշտպանության վրա, Բաֆֆու հայացքներում ոչ միայն խոր արմատներ էր գցել, այլև, ինչպես ցույց է տալիս նրա հետագա ստեղծագործական աշխատանքը, դառնում է «գերի ազգերի կորուսյալ ժառանգության» վերադարձման գործնականում իրագործելի ծրագրերի մտահղացման հիմք: Բաֆֆին այս շրջանից սկսած ամենամուր կապերով կապվում էր հայ ազգային-ազատագրական շարժումների հետ և դառնում Մ. Նալբանդյանի գաղափարական ուղեգծի ժառանգորդ ու հետևորդ: «Այսօր, — դրել էր Մ. Նալբանդյանը «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր երկասիրության մեջ, — ճնշված մարզերի համար, ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվիլ բռնակալության ընդդեմ»¹⁰: Այսպես էր մտածում նաև Բաֆֆին. «Ազգայնության գաղափարը մեր կյանքի գաղափարն է, նա տնօրինում է և բարվոքում է մեր բարոյական և նյութական դրությունը, նա արտադրում է մեզ մեր մարդկայնության իրավունքները»¹¹:

«Սալբի» առաջաբանը կասկած չի թողնում, որ Բաֆֆին հենց այդ ժամանակ իսկ ծանոթ էր Նալբանդյանի «Երկրագործության» հիմնական գաղափարներին և, մասնավորապես, ազգային հարցում շատ բան էր ուսանել նրանից:

Ճիշտ է, վիպասանը հեռավոր ապագային էր հանձնում ազգերի և լեզուների միավորման, ընդհանուր հավասարության, համայնական սեփականության ստեղծման հեռանկարում ուրվագծվող համաշխարհային եղբայրության էլիզորադոյի հնարավորությունը, բայց հավատացած էր, որ «ազգայնության

⁶ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 63—64:

⁷ Նույն տեղում, էջ 60—61:

⁸ Նույն տեղում, էջ 61:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Մի քայլ Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 90:

¹¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 65:

զաղափարը» հաղթանակելու է այժմ՝ XIX դարի վերջին կիսաբաժնում—այդ «ոսկեդեն միջնասահմանում»։ «Այսուհետև ազգերին մահ չկա»,— մարգարեանում էր նա։

Թողնելով Պարսկաստանը՝ տնտեսական աղետների ենթարկված և գրեթե ամեն ինչ կորցրած 35-ամյա Բաֆֆին, եկավ Թիֆլիս՝ լի ծրագրերով, ստեղծագործական հոգսերով, առևտրից, վաճառականությունից մազապուրծ գերյալի աղատարաղձ կենսախնդությամբ։ Թիֆլիսյան բարեկամների օգնությամբ նա ընկավ Եվրոպայից հենց նոր վերադարձած երիտասարդ Գրիգոր Արծրունու խմբագրական ժողովների տաք միջավայրը։ Այստեղ ծրագրվում էր ազգային-մտավոր գործունեության մի փայլուն ապագա։ «Մշակ» լրագրի համար շոկվում էին աշխատակիցներ, որոշվում էին ուղղությունը, անելիքները, ընդգրկումը, նախապատրաստվում էին տպագրելիք նյութերը։

Բաֆֆին առաջին անգամ իր առաջ բացված է տեսնում հասարակական աշխատանքի լայն ասպարեզ։ «Մշակը»,— վերհիշում է հետագայում վիպասանը,— յուր մոգական հարվածով միանգամից շարժեց հասարակական թրմը՝ մարմինը։ ...Լրագիրը դարձավ հասարակության դաստիարակ և միևնույն ժամանակ, նրա ընդհանուր կարիքների արտահայտություն։ ...«Մշակը» հեղեղեց հասարակությունը մի նոր կենդանացուցիչ հոսանքով։ Վաղեմի, ավանդական ինքնախաբեության փոխարեն, սկսեց տիրապետել կրիտիկական հայացքը։ Ինքնաքննությունն ու ինքնաճանաչությունը,— ահա այն դրդող և առաջ մղող տեսակետը, որով սովորացրեց նա հայ հասարակությանը մտածել յուր պետքերի և յուր թերությունների վրա»¹²։ Ամենից առաջ «Մշակը» միավորում էր ազգությունը։ «Նա առաջինը եղավ, որ ծանոթացրեց ռուսահայերին իրանց տաճկաստանցի, պարսկաստանցի, հնդկաստանցի և երկրագնդի զանազան կողմերում ցրված եղբայրների հետ»¹³։ Ազգայնության գաղափարը հենց այն ամրանյութն էր, որով շաղախվում էր ազգի ինքնաճանաչումը։ Եվ այստեղ անփոփոխելի էր Բաֆֆու դերը։ Տասը տարի շարունակ նա «Մշակի» միջոցով ոչ միայն քարոզում և ինքնաճանաչման էր բերում ազգը, այլև միավորում էր նրա ուժերը, գիտակցությունը, կամքը և գործնականում առաջ մղում հայ ազգային-ազատագրական շարժումը։

«Մշակի» խմբագրատունը դարձավ շարժման ղեկավարության կենտրոններից մեկը։ Թիֆլիսում ստեղծված «Երեքի կոմիտեն» (1879)—Բաֆֆի, Արծրունի, Գ. Միրզոյան, արդեն զբաղվում էր նարոդնիկական հեղափոխական խմբերի ու խմբակների կազմակերպման, Արևմտահայաստան՝ զենքի տեղափոխումների հարցերով։

«Հայկական հարցի» միջազգային քննարկումները 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո աշխուժացրին հայ նարոդնիկների գործունեությունը։ Ստեղծվեցին նոր կենտրոններ՝ Կաբինում, Վանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում և այլուր։ Ամբողջ 80-ական թվականներին՝ սուլթանիզմի ու ցարիզմի ազգահալած գաղութային քաղաքականության և բռնությունների պայմաններում, ազգային-ազատագրական շարժումը աճում էր ու զորեղանում։ Պարզ դարձավ մի կարևոր ճշմարտություն՝ յուրաքանչյուր ազգի ազատագրության գործ չի՝ կարող դառնալ ուրիշ ազգերի սեփական գործը (Ա. Ի. Գերցեն)։ Այս ճշմարտությունը հասկացել էին նաև շարժման հայ ղեկավարները և մասնավորապես՝ Բաֆֆին։ Եվ հենց այստեղից էլ սկիզբ առան, ընդարձակվեցին, աճեցին ու ամրապնդվեցին մեծ վիպասանի գործունեության ու ազդեցության համահայկական շրջանակները։

* * *

«Ճշմարիտ բանաստեղծությունը,— դրել է «Մշակը» 1877 թվականին,— կարող է ստեղծվել մի վերածնվող, երկար ժամանակ նյութական ու մտավոր

¹² Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 328—329։

¹³ Նույն տեղում, էջ 329։

ստրկության մեջ մնացած ազգի մեջ այն ժամանակ, երբ երկար ժամանակ ժողովրդի մեջ սերմանած կլինեն գրականության միջոցով բարոյական գաղափարներ, կլինի ժողովրդի մեջ բարոյական իդեալների մեծ պաշար: Բանաստեղծությունը (գեղարվեստական գրականությունը— Կ. Դ.) չի կարող ծնվել ու կատարելապես զարգանալ հասարակական անզարգացած, բարոյական իդեալներով աղքատ ազգի մեջ»¹⁴: Րաֆֆին, իրոք, ստեղծեց այդ բարոյական իդեալների» գրականությունը, և դրանում է նրա անմահության գաղտնիքը: Այդ գրականությունը, թեև ընկած էր ճշմարիտ բանաստեղծության և հրապարակախոսության միջաստիճանում, թեև գեղարվեստական արժեքայնության տեսակետից գիշում էր ճշմարիտ բանաստեղծությանը, բայց կյանքի հետ ունեցած անմիջական ու խոր կապերի բերումով, բարոյական իդեալների հարստությանը և ազգայնության գաղափարի համահավաք ուժով դառնում էր ներկա ու գալիք սերունդների հոգևոր սննդառության անփոխարինելի աղբյուր, պահում ու պահպանում էր ազգը, ավշավորում պատանեկության և երիտասարդության զորացող երակներն ու գիտակցությունը՝ ազգային հիշողության, արյան բաբախի հնօրյա ինքնաճանաչման խորհրդավոր ուժով:

Րաֆֆին դարձավ ազգային դաստիարակ: Նրա հրապարակային ելույթները, քննախոսությունները, ճամփորդական նոթերը, պատմվածքները, վիպակներն ու վեպերը հանգուցում էին ազգը զբաղեցնող կենսական հարցեր, մատնանշում հեռանկարներ, բերում գործնական ծրագրեր, ուսուցանում մարդկանց, վերափոխում սերունդը և, միավորելով ազգության ուժերը, մղում պայքարի ու ինքնազոհաբերման:

Հիմնականում երեք ուղղությամբ էր առաջ մղում նա իր ստեղծագործական աշխատանքը՝ ա) ազգի ներկա կյանքի գեղարվեստական ուսումնասիրության, բ) ազատագրական շարժման ու պայքարի, կազմակերպական ձևերի ու ծրագրերի վիպական կենդանագործման և գ) ազգի պատմության ու պատմական փորձի գեղարվեստական ու գիտական հետազոտությունների ուղղություններով:

Հայոց կյանքը միջնադարյան խավարից մինչև XIX դարի կեսերը, մինչև ազգերի ինքնաճանաչման և ազատագրության ժամանակները, մինչև ներկան, նրան պատկերանում էր մղձավանջի տեսքով: Ծիշտ այնպես, ինչպես Խաչատուր Աբովյանը, Րաֆֆին ևս մեծ բարեբախտություն և ազգի ուժի ու կենսունակության նշան էր համարում ժամանակների դեմ հայոց հաղթանակը. «Հայ ազգը յուր գառն կյանքի ընթացքում կատարեց այն թեև արյունոտ, բայց փառավոր հաղթությունը, այսինքն, դիմանալով բարբարոսների այնքան կործանարար հարվածներին, նա ազատեց թշնամու սրից մոտ շորս ու կես միլիոն հայեր և հասցրուց մինչև տասնեկիններորդ դարուս վերջին կիսաբաժինը»¹⁵: Սա հրաշքի պես մի բան էր թվում, ու երբ ազգը հասել էր արդեն այդ ռուսկեղեն միջնասահմանին», նրա համար գուշակվում էր մի բախտավոր ապագա: «Արդարև,— գրում էր վիպասանը,— նորա անցյալն անցավ արտասուքով, լացով և արյունով. նորա ներկան դարձյալ ցավալի է, բայց նորա ապագայի մասին բոլորովին անհույս չեմք: Հայ ազգը մի բախտավոր ապագա ունի»¹⁶:

Կյանքի վերջին շրջանում գրած «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» (1887) հոդվածում Րաֆֆին կարևոր և միջև այժմ մոռացված նկատում ունի. «Պետք է մի առանձին բախտ, կամ հանգամանքների պատահական դիպված համարել, որ մեզանում առաջին վիպագրության հիմնաքարը դրեց մի ճշմարիտ վարպետ, մի լավ պատրաստված մարդ»¹⁷: XIX դարի 40-ական թվականներին Աբովյանի ջանքերով ստեղծվեց «Ժողովրդական գրականությունը». «Բայց,— այնուհետև նկատում էր վիպասանը,— վիպագրությունը չէր կտրող միշտ գեղեկական կյանքի նեղ, սահմանափակ շրջանի մեջ մնալ»¹⁸: Այս հա-

¹⁴ «Մշակ», 1877, № 39:

¹⁵ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 63:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Րաֆֆի, Գրականության մասին, էջ 325:

¹⁸ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 63:

յացքն ու համոզումը Րաֆֆու համար ելակետային նշանակություն է ունեցել: Նա ինքը ես սկսեց գյուղից, «Սալրին» պարսկահայ գյուղական կյանքի արտացոլումն էր: Սկսելով գյուղից, Րաֆֆին սակայն ընդլայնում էր գյուղավեպի շրջանակները ճիշտ այնպես, ինչպես իր մեծ նախորդը, իրականության արտացոլման ընդգրկումը հասցնելով հայ գյուղացիության ու նրա կյանքի լուսավորական վերափոխումների, հասարակական վերաշինումների, ազգային-քաղաքական մաքառումի նորասկիզբ դեգերումների պատմահոգեբանական և սոցիալական տարածքը: Րաֆֆին ճիշտ էր հասկացել Աբովյանին՝ ոչ թե գեղջկական կյանքի սահմանափակ, նեղ շրջանի ու սրան համապատասխան մարդկային բնավորությունների և հոգեբանության՝ գեղարվեստական ճանաչման նախանձախնդրություն, այլ՝ ազգայնության գաղափարի միջուկը հանդիսացող հայ բնավորության ու կյանքի, շրջատեսության ու հոգեբանության վերլուծում և գեղարվեստական յուրացում:

Այսպես, հենց սկզբից Րաֆֆին միանգամայն հեռու է կանգնում ազգա-հրական-կենցաղագրական պատմվածքի ու գյուղավեպի 1850—60-ական թվականներին բավական տարածում գտած ձևերից և հանդես գալիս որպես գրական նորարար, վերանորոգիչ և օրենսդիր:

Հայ գյուղն ու գյուղացին մտնում էին նրա գեղարվեստական հետաքրքրությունների ոլորտը ամենևին ոչ պատահականորեն: Նախքան դանից ստացած դասառնությունը, խոր կապվածությունը այն ամենի հետ, ինչ բովանդակվում էր թշվառ ու զուրկ գյուղացիության, ինչպես ինքն էր ասում՝ ազգի հիմքը կազմող տարրի, սոցիալական ճակատագիրը, գրողին տանում էր ժողովրդասիրական գաղափարների հունով: Նա ելնում էր ստեղծված իրադրությունից. Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան — ամենուրեք զրկվում էր հայ գյուղացին, ամենուրեք հարստահարվում և դրա հիմնական պատճառը հողի մշակման հնադարյան ձևերի ու եղանակների հարատևումն է, քսենոֆոնյան ժամանակներից մնացած բարքերն ու սովորույթները, որ պահպանվում են մինչև այժմ, անձնապահպանության բացակայությունը, նաև օտարացումը, խորթացումը ընդդեմ վաստակած հացից»:

«Մարդու կյանքը, — գրում էր Րաֆֆին, — կապված է բնության հետ և նորա մայր — է հողը: Եթե հայը կամեր կյանք և ապագա ունենալ, նա պետք է չորս ապրուստը հիմնե հաստատուն հողի վերա, և այդ հողը թող լինի այն, որ սրբված և գնված է մեր նախահարց արյունով»¹⁹: «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկասիրության ձևակերպումների ներկայությունն այստեղ պատահական համընկնումների արդյունք չէ: Րաֆֆին հենվում էր նախքան դանիական գաղափարներին «Սալրից» սկսած: Պարսկահայ պատկերները, «Հարեմը» և քիչ ավելի ուշ գրած «Նասիփուշները», «Նալազողի հիշատակարանը» երևան են հանում ժողովրդասիրական այն կողմնորոշումները, որ Րաֆֆուն անցել էր նախադրանից:

Հողի ազատագրության հարցը Րաֆֆին կապում էր բռնատիրական կարգերից զենքի օգնությամբ ազատագրվելու ազգային գործիմացության հետ: Արևելյան սլավոնների՝ բուլղարների, սերբերի, հերցեգովինացիների, ալբանացիների ազատագրումը թուրքական տիրապետությունից հայդուկային մաքառումների և զինված ապստամբությունների միջոցով և ուսական հզոր կայսրության քաղաքական միջամտության օգնությամբ՝ ճանապարհ էր, որ թեև վերջից հայ ազգային ազատագրական միտքը: «Հայկական հարցի» միջազգային քննարկումները 1870-ական թվականների վերջերին, առաջ բերեցին հույսերի ու ակնկալիքների քաղաքական վիթխարի հորձանք, որին դիմակայելու անընդունակ էին անգամ ցարական սատրապները:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, այնուամենայնիվ, Երևանյան նահանգին միացավ ազատագրված Կարսի մարզը: Եվ սա մի աննշան փաստ չէր: Առաջին անգամ եվրոպական դիվանագիտական բանավարություններին ներկայացան հայ պատվիրակներ: Եվ սա դարձյալ մի աննշան

¹⁹ Ր ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 200:

փաստ չէր: Ոգևորվում էր հայութունը, ուժգնորեն զարկում էր սիրտը՝ փրկության ունալ հնարավորությունից:

Հայ բանագնացները Բեռլինի վեհաժողովից վերադարձան միանգամայն ճիշտ հետևություններ արած՝ ամեն ազգ վարձատրվում է թափած արյան համեմատ: Այս տեսակետը դարձավ 1880—90-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժումների հանրահաշիվը: Եվ այստեղ դարձյալ մեծ ու անփոխարինելի էր Րաֆֆու դերը: Նա գրեց «Ջալալէդդինը», «Խենթը», «Կայծերը»: Արդեն «Խաչագողի հիշատակարանից» սկսած մեծ վիպասանը ուրվագծում էր այն հերոսներին, որոնք պետք է իրենց վրա առնեին ազգային շարժման և ազգի ազատագրության պատասխանատվությունը: «Կայծերը», ինչպես հայտնի է, ավելի վաղ մտածումների ու ծրագրումների արդյունք էր:

1879-ին, ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո գրած «Խենթը» (ազատագրական շարժման գրականության գլուխգործոցներից մեկը) վեպում Րաֆֆին առաջին անգամ փորձեց ներկայացնել Արևմտյան Հայաստանի գյուղերում բացատրական-քարոզչական աշխատանք տանող նարոդնիկ-հեղափոխականին: Սա հայ սպասումների և ակնկալիքների պատգամաբերն է: Միքայել Դուդուկյանը հայտնի է, թե որտեղից էր գալիս և ուր էր գնում: Անհանգիստ աչքերի տենդային փայլով, մթին ու ծածկամիտ այդ բնավորությունը, որ «իսկույն կասկած էր հարուցում», ուսին գցած կաշյա պայուսակի մեջ պահած ուներ «զանազան փոքրիկ տետրակներ», որ ձրիաբար բաժանում էր հանդիպած գյուղացիներին: Նա անվախ էր, ժուժկալ, նետվում էր առաջին իսկ փորձության մեջ և գործում ճիշտ ու ճիշտ թիֆլիսյան նարոդնիկական խմբակների «հեղափոխականների» նման: Րաֆֆին ստեղծում էր այս կերպարը ամենևին էլ ոչ երևակայորեն: Արդեն կային այդ մարդիկ: «Երեքի կոմիտեի» անդամներից մեկը՝ Գաբո Միրզոյանը հետագայում մտաբերելով Րաֆֆու հետ գործակցությունը և աշխատանքի այդ տարիները, վերհիշում է. «Մենք աշխատում էինք այստեղ (Թիֆլիսում) մշեցի, ալաշկերտցի և այլ թուրքահայ համազգայինների մեջ որոշ քաղաքական պրոպագանդ անել, նրանց պատրաստել, երիտասարդ ուժեր ուղարկել երկիրը, ապստամբաշունչ բողոքներ և գեներ փոխադրել»²⁰: Երկիր ուղարկված այդ երիտասարդ ուժերի ներկայացուցիչներից մեկն է Միքայել Դուդուկյանը: «Խենթը» վեպի գեղարվեստական էջերը պահպանել են պատմական իսկությունը:

Ի՞նչ էր քարոզում Դուդուկյանը, ի՞նչպես էր գործում, ի՞նչ անելիքներ ուներ:

Արևմտահայաստանում ծավալված հայդուկային-հեղափոխական շարժման պատմաբանը Րաֆֆու գեղարվեստական երկերից շատ ավելի նյութեր կարող է քաղել, քան այդ հարցերին նվիրված հատուկ հետազոտություններից: Ստեղծելով Դուդուկյանի կերպարը, վիպասանը հասկանում էր, որ շարժման նախասկիզբ տարիներին այն վարակիչ օրինակ կարող է դառնալ, միաժամանակ մարդկանց գործնական ուղիներ ցույց տալ Արևմտահայաստանում քարոզչական-բացատրական աշխատանք ծավալելու, այլև նախապատրաստելու, ժողովրդին ոտքի հանելու, զենքին տիրապետելու գործնական-կազմակերպական եղանակներ սովորեցնելու:

Հայտնվելով Բագրևանդի գավառի Օ... գյուղում, տանուտեր Խաչոյի հյուրընկալ հարկի տակ Միքայել Դուդուկյանը սկսում է քարոզը.

— Համբերությունը մահ է,— գունաթափ շուրթերից դուրս թռավ նրա դողացող ձայնը, երբ տանուտեր Խաչոն հոգևոր առաջնորդներին հետևելով, կրկնում էր նրանց խոսքերը, համբերության, տոկալու, աստծո բարեսրտության և օգնակամության մասին: «— Համբերությունը մահ է,— կրկնեց նա վրդովված ձայնով: Մեր տերտերները, մեր վարդապետները համբերություն են քարոզում... Ախր նրանք քանդեցին մեր տունը և այս ստրկական վիճակին հասցրին մեղ: Եթե կա մի բան, որ կարող է փրկել հարստահարված և ճնշված ժողովուրդներին, գա է՝ բողոքը, ինչ կերպով և հայտնվելու լինեի նա: Դժգոհությունը, տրտմանը և իր վիճակից մի ավելի բարեբախտ վիճակի ցանկանալը—

²⁰ «Բանբեր Երևանի համալսարանի», 1966, № 1, էջ 38:

ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ ազատել ստրկութունից»²¹։

Նրիտասարդ բարոզչի խոսքերը ցնցող տպավորություն են թողնում։ Վարդանը և Խաչոյի որդին՝ Հայրապետը, բարեկամաբար սեղմում են նրա ձեռքը։ Հաջորդ օրը Միքայելը հայտնվում է եկեղեցու բակում, մոտենում հավաքվածներին։ Անա խոսակցության մեջ մտավ և սկսեց բացատրել գյուղացիներին, թե նրանք վճարում են կառավարությանը ավելի, քան պետք է վճարել, բայց իրանց հասարակական գործերի մասին ամենևին հոգ չեն տանում։ Խոսում էր աղջկանց և տղայոց դպրոցների մասին, որոնցից զուրկ են մեր գյուղացիները, խոսում էր ինչ-որ ընկերության մասին, որ կարող էր բարվոքել գյուղացու տնտեսական վիճակը։ Խոսում էր ինչ-որ հասարակաց դրամարկղի մասին, որտեղից կարող էր էժան տոկոսով փող վեր առնել կարոտության ժամանակ, — ով է իմանում, հազար ու մեկ այս տեսակ բաների վրա էր խոսում»²²։

Քարոզչական-բացատրական աշխատանքը սրանով չէր վերջանում։ Հիմնական մտահոգությունը մնում էր թուրքական կառավարության ներքին քաղաքականությունը հայ գյուղացիներին խորքից լուսաբանելու խնդիրը։ Բաժնուհերոսը ճիշտ էր հասկանում «Հայկական հարցի» լուծման թուրքական տարբերակի հրեշավորությունը։ Բնական մի պայքար է մղվում մարդկային կյանքում։ Ով գործում է անձնապաշտպանության օրենքների համաձայն, նա փրկվում է կամ հաղթում։ «Ուր կյանք կա, այնտեղ կա և այդ բնական կոիվը», — ասում է Դուդուկյանը²³։ «Անձնապաշտպանության օրենքները պահանջում են պատասխանել թշնամուն նույն զենքով, ինչ զենքով որ նա ճնշում և մահացնում է մեզ»²⁴։ «Արևելյան հարցի», այսինքն թուրքիային հպատակ քրիստոնյա ազգերի ազատագրության հարցի լուծման ընթացքը ստիպում է թուրքերին արագորեն տալ դրա մի մասը կազմող «Հայկական հարցի» վճռադատությունը, որ արդեն վաղուց կայացած է։ Պատմա-տնտեսական հիանալի վերլուծությանը Դուդուկյանը պարզում է, թե ինչպես է սուլթանական կառավարությունը իրացնում հայերի ոչնչացման դժոխային ծրագիրը։ «Իր նահանգները չկորցնելու համար, քրիստոնյա թագավորությունների միջամտությունից աղատվելու համար, թուրքը ստիպված էր ոչնչացնել քրիստոնյաներին։ — Քրիստոնյաների պատճառով նա իր եվրոպական նահանգներից շատերը կորցրեց և մնացածը կորցնելու վրա էր։ ...Այստեղ գլխավոր քրիստոնյա ազգությունը... են հայերը։ Ուրեմն, եվրոպական տերությունների ձայնը կտրելու համար, պետք է ցույց տալ նրանց, որ Հայաստանում հայ չկա»²⁵։ Դուդուկյանը նկարագրում է այն շահյալարարված պատերազմը, որ թուրքերը մղում են հայերի դեմ՝ տնտեսական, կրոնական, ազգային ուղղություններով։ «Եթե հավաքելու լինենք վերջին 20—30—50 տարիների ընթացքում կատարված փաստերը, — ասում է նա, — կհամոզվենք, ...որ հայերի վերաբերությամբ գործված հարստահարությունները, ճնշումները, հալածանքները, հափշտակությունները, մի խոսքով բոլոր բարբարոսությունները պատահական երևույթներ չեն, — կհամոզվենք, որ այդ բոլորի մեջ թաքնված է մի նախամտածված, կարգադրված ճիմ և նպատակ, որ ժառայում են հայկական տարրը հետզհետե տկարացնելու, սպանելու և վերջապես ոչնչացնելու համար»²⁶։

Նարոդնիկ-հեղափոխականի մտքերի ընթացքը էլ ավելի հեռուն է գնում։ Թուրքիան դիմել է հայերի ցեղասպանությանը։ Տանջելով, բարոյապես և մտավորապես մաշելով, տակավ առ տակավ քամելով կենսական ուժերը նա հասնում է ցեղի ոչնչացմանը։ «Դա մի սարսափելի սպանություն է»։ «Այսպիսի սպանություններ կատարվում են ոչ միայն մասնավոր անհատների վերաբեր-

21 Բ ա Յ Ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1955, էջ 177։

22 Նույն տեղում, էջ 184։

23 Նույն տեղում, էջ 194։

24 Նույն տեղում, էջ 195։

25 Նույն տեղում, էջ 201։

26 Նույն տեղում, էջ 202։

րաջամբ այլ ամբողջ ազգերի վերաբերությամբ ևս: Մի այսպիսի սպանություն սպասում է մեզ»²⁷։ Այս տողերը Րաֆֆին գրել է Մեծ հղեռնից գրեթե մեկ հիսնամյակ առաջ: Սա մի իրատեսություն էր, որ հենվում էր արևմտահայության կյանքի պայմանների խոր ճանաչման և եվրոպական պետությունների ու Բուլղարիայի հարաբերությունների, թուրքական ազգայնական արյունառուշտ քաղաքականության փոխակապվածության փաստի ըմբռնման վրա:

Հայերի գալիք ցեղասպանության պարզ պատկերացումը հրում էր աղ-գային-ազատագրական պայքարի ղեկավարներին ոչ միայն շտապել, այլև դի-մել ամեն միջոցի՝ ժողովրդին արթնացնելու, կազմակերպելու, ինքնապաշտ-պանական մաքառման ուղիներ որոնելու: «Հայերը պետք է բողոքեն», — ասում էր Րաֆֆին, — բայց այդ բողոքը պետք է լինի անձնապաշտպանությամբ ար-յուն թափելու վճռական գործունեություն: «Հիմա աշխարհի կարգն այդպես է, — թարգմանում էր Րաֆֆու մտքերը նրա գրական հերոսը, — և միշտ այդ-պես է եղել, ով որ գնք գործածել չգիտե, ով որ արյուն թափելու և մարդիկ կոտորելու ընդունակություն չունի, նրան ասում են՝ դու աղատ լինելու իրա-վունք չունես: Ուրեմն, եթե հայերը ցանականում են մի բան ստանալ և աղատ լինել, պետք է ցույց տան, թե իրանք ևս զուրկ չեն քաջությունից, թե իրանք ևս սպանել գիտեն: Եվ այժմ ամենահարմար ժամանակն է»²⁸:

Ինչու է ամենահարմար ժամանակը:

0... գյուղում հայտնված նարոդնիկ-հեղափոխականի զրույցը գյուղացի-ների հետ տեղի է ունենում 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին: Դուռուկչյանը բացատրում է. «Ռուսները պիտի պատերազմեն թուրքերի հետ, թող հայերն ևս մի կողմից գլուխ բարձրացնեն: Ես հավատա-ցած եմ, որ ռուսները ամեն կերպ կօգնեն մեզ»²⁹:

Մեծ Ռուսաստանի ռազմական միջամտության հետ կապելով արևմտա-հայության փրկության այս շրջափուլի խնդիրները, Րաֆֆին, բուլղարների օրինակով, ոգևորում էր հայերին, մտածում և հանձնարարում ինքնապաշտ-պանության լայն ծրագիր, զենքով, զոհաբերություններով ռուսական զորքին օգնելու և ամեն կերպ աջակցելու քաղաքական դիրքորոշումը դիտելով որպես արդեն պատմականորեն փորձված և արդարացված եզրագիծ:

Հանդես բերելով հեղափոխական գործիչների կերպարները՝ Դուռուկչյան (պ. Սալմա), Մելիք-Մանսուր, Վարգան, Հայրապետ, Կարո, Ասլան, Սազո, Համր, Ֆահրատ և ուրիշներ, վիպասանը ազգը գալիք ճակատամարտերին և ինքնապաշտպանական կռիվներին նախապատրաստելու ծրագրեր էր առա-ջարկում, հայ գյուղացուն մղում բուլղարական, հայդուկային-հեղափոխա-կան կոնսպիրատիվ, հսկայացանց կազմակերպությունների մղած հերոսա-կան պայքարի գործնական ձևերի կրկնօրինակմանը:

Առաջին անգամ Րաֆֆու ջնորհիվ հայ վիպագրությունը դառնում էր ազ-գային-ազատագրական շարժման ուղղակի լծորդ ու կազմակերպիչ: Սա գաղա-փարախոսական աշխատանքի եզակի երևույթներից է: Րաֆֆու վեպերը ըն-թերցում էին բոլորը: Երիտասարդությունը տեսնում էր իր առաջնորդին և դաս-տիարակին: Րաֆֆիական անձնաքննական ուղղությունը ստիպում էր մարդ-կանց նայել ոչ միայն իրենց ներսը, այլև՝ ազգի հավաքական թերություննե-րին: Այս կերպ ի հայտ են գալիս այն պայմանների վճռականորեն կարևոր ազդեցության անդրադարձը մարդկանց մտածողության, հոգեբանության և գործիմացության վրա, որոնք և ծնում էին ազգության հերոսներին:

Դեռևս 80-ական թվականների սկզբներին է նկատվել Րաֆֆու երկերի («Խենթը», «Կայծեր») Ի. Ս. Տուրգենևի և Ն. Գ. Զերնիշևսկու գրական ժառան-գության հետ ունեցած առնչությունների փաստը: «Մեղու Հայաստանի» լրա-գրի քննադատ Հակոբյան 1883 թ. գրախոսելով «Կայծերի» առաջին հատորը, ոչ առանց մի որոշ դիտավորության, գրել է. «Պարզ երևում է, որ «Կայծերի»

²⁷ Նույն տեղում, էջ 204:

²⁸ Նույն տեղում, էջ 192:

²⁹ Նույն տեղում:

հեղինակը շատ է կարգացել Տուրգենև, նամանավանդ Չերնիշևսկի ուսու պի-
պասաններին: Իմ խոսքը, խնդրեմ ծուռը չմեկնել: Ամեն դարի և ամեն ազգի
գրողները միշտ ենթարկված են եղել նախորդ գրողների ազդեցությանը: Եվ
պ. Բաֆֆիի համար հազար երանի չէր, թեկուզ Տուրգենևների և Չերնիշևսկի-
ների ազդեցությանը ենթարկվել, քան պարսկական դերվիշների և աշգնների:
Ես հո չեմ ասում, թե պ. Բաֆֆին «Կալթերումն» էլ այնպես է վարվել, ինչպես
մի ժամանակ «սենթում», ուր Չերնիշևսկու վերա Պավլովնայի երազը իրան
վարդանի բերանն էր դնում»³⁰:

Հայ ազգային-ազատագրական շարժման գրականությունը, իրոք, նկա-
տելի ազդեցություն էր կրում ինչպես ուսական, այնպես էլ բուլղարական գե-
ղարվեստական գրականությունից: Պետերբուրգի հայ ուսանողական կազմա-
կերպության հրատարակած գրքուկների մեծ մասը, Լեոյի վկայությամբ՝ «վե-
րաբերում էր բուլղարների հայդուկային հեղափոխությանը»³¹: Բայց Բաֆֆին
հասցրել էր իր գործն անել ավելի վաղ: Մեծ վիպասանին հետևելով, երիտա-
սարդությունն այժմ թարգմանում էր այն ամենը, ինչ կարող էր նպաստել
արևմտահայության ազգային-ազատագրական շարժմանը: Ընդ որում՝ այս-
տեղ, իհարկե, մի կարևոր և նշանակալից դեր էր ստանձնում բուլղարների
ազատագրության օրինակով հայերին ոգեշնչելու՝ կողմնորոշումը, բուլղարա-
կան ազատագրական շարժման գրականության թարգմանությունը:

* * *

Բաֆֆին նոր շրջանի հայ վիպագրության և պատմվածքի հիմնադիրն է:
Անցյալ՝ 1840—50-ական թվականներին թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ
հատվածներում ստեղծված վեպերն ու պատմվածքները նոր-նոր միայն ուր-
վագծում էին այդ ժանրի կամ փոխառյալ, կամ ազգային ձևերը: Մինչև Բաֆ-
ֆու հանդես գալը հայ վեպն ու պատմվածքը ժանրային իմաստով լինելիու-
թյան ընթացքի մեջ էին: Բաֆֆին էր, որ ստեղծեց ժանրային կայուն սահման-
ներ ունեցող եվրոպատիպ արձակ, որ այս դեպքում մեր ազգային գեղարվես-
տական մտածողության նվաճումն էր: Նա արևելահայ գեղարվեստական
գրականության լեզուն, հանեց բարբառային, նաև հյուսիսափայլյան շրջանի
որոնումներից և տվեց նրան ոչ միայն ինքնատիպություն (զուտ Բաֆֆիական
իմաստով), այլև՝ բառապատկերային, միասնական ոճական մտածողություն:
Այս հանգամանքը նրա երկերի տարածման և լուսավորական դերի, ինչպես
նաև խազագած հասարակական-քաղաքական վիթխարի նշանակության բուն
հիմքն է կազմում: Բաֆֆու գրականությունը Աբովյանի երազած գրականու-
թյունն էր՝ հասկանալի, ժողովրդական, հետաքրքիր, գաղափարներով և իդեալ-
ներով հարուստ, որ անմիջապես ներգործում էր և ուսուցանում, հասարակու-
թյան բոլոր խավերին մղում գործնական վերադիրքավորումների և ինքնա-
քրննության:

Ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջափուլում նա ստեղծեց
սոցիալական վեպերի այն շարքը, որոնք միաժամանակ հայ հասարակության
բուրժուազեմոկրատական զարգացման էական առանձնահատկությունների
արտացոլումն էին բերում, պարզում հասարակական կոնֆլիկտների ժամա-
նակակից բովանդակությունը, վեր հանում կատարված մարդկային ողբերգու-
թյունների դասային ու դասակարգային ծալքերը: Իր բնույթով լուսավորա-
կան այդ գրականությունը հենվում էր կյանքի գեղարվեստական հետազոտու-
թյան ողմանտիկական եղանակի վրա:

Բաֆֆու ողմանտիզմը՝ օգտապաշտական փիլիսոփայության յուրացում-
ներով, լուսավորական դարաշրջաններին բնորոշ հումանիստական լիցքավոր-
մամբ, դեմոկրատական կողմնորոշումներով քննադատական սուր բնութա-
գրություն ունեւր: Արդեն «Զահրումար», ինչպես նաև փոքր-ինչ ուշ գրած «Մինն

³⁰ «Մեղու Հայաստանի», 1883, № 39:

³¹ Լեռ, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 43:

այսպես, մյուսն այնպես» և «Ոսկի աքաղաղ» վեպերում (70-ական թվականներ), Բաֆֆին հանդես էր դալիս հասարակության սոցիալական բեկնացումների, հնամենի ավատական հարաբերությունների, բուրժուականացող քաղաքային բարքերի ու մտայնության անխնա քննադատությամբ, դուրս էր բերում մարդկային բնավորություններ ու տիպեր, որոնք խավարի մեջ կեղեքում էին՝ իրենց զոհերին և «անհագ վամպիրի նման ծծում նրանց արյունը»³²:

«Խեղացի մարդը կգողանա», — ասում և հանձնարարում էր «Ոսկի աքաղաղի» հերոսը՝ Պետրոս Մասիսյանը, յուրայիններին: Առևտրի, վաշխի, կապալային գործարքների մեջ հմտացած նորօրյա այս Շելյուկը ներկայացնում էր անհետացող մի դարաշրջան: Նրա տնտեսական գործունեությունը, որ սնահավատքից ծայր առնելով ձգվում էր մինչև օրը ցերեկով մարդկանց վայրենաբար կողոպտելու գործիմացությունը, ապագա և հեռանկար չունեի: Մասիսյանը կործանվում է, որովհետև, ինչպես նկատում է նրա որդեգիրը՝ Միքայելը՝ «իր հարստությունը այնպիսի անհաստատ և խաբխուղ հիմքերի վրա էր գրած, որ ուրիշ կերպ սպասել չէր կարելի. պետք է նրա մահից հետո ամեն ինչ ոչնչանար»:

Ասիական առևտրի ձևերից մինչև ասիական մարդկային բնավորությունը, Բաֆֆու կարծիքով, պետք է վերափոխումների ենթարկվի: Կյանքի եվրոպականացման պահանջը լուսավորականության գաղափարական հանձնարարականներից էր: Եվ Բաֆֆին կանգնում էր դրա պաշտպանության դիրքերում՝ հայ հասարակության միասնացման, միավորման և ազգովին վերարթնանալու ու տնտեսական բարեկեցության հասնելու հեռանկարը փայփայելով:

Հասարակության վերափոխման գրողի պատկերացումները ժողովրդապետական հանրապետության իդեալին էին կառչած: Ազգայնության գաղափարը այս դեպքում վճռում էր իդեալի բովանդակությունը: Նա տեսնում էր Անդրկովկասում տնտեսական գերիշխանության հասնող հայ արդյունաբերողների և վաճառականների հուժկու առաջընթացը: Նա մտածում էր, թե դա ազգի ուժն ու զարգացման հեռանկարներն ապահովող վճռական գործոն է: Այդ պատճառով բուրժուազիայի տնտեսական զորեղության օգտագործման և գործունեության եվրոպականացման միտքը նա ավելի քան ընդգծում էր՝ ազգային ինքնակառավարման և ապագա հայկական պետության ստեղծման իր առաջարկած ծրագրերում:

«Խաչազողի հիշատակարանում» Համրը բացատրում է Մուրադին. «Մի ամբողջ ազգի անբախտության պատճառները հասկանալու համար, պետք է նույնպես ծանոթանալ նրա պատմության հետ»³³: Այս միտքը Բաֆֆու ստեղծագործական որոնումների հիմքում էր ընկած: Ոչ միայն ժամանակակից կյանքն արտացոլող վեպերում, այլև արդեն 80-ական թվականներին գրած պատմական կտավներում Բաֆֆին դարձյալ քննում էր ներկայի հարցեր, դարձյալ փորձում էր ժողովրդին հասկանալի դարձնել «ազգի անբախտության պատճառները» պատմության տեսանկյունից:

«Պարույր Հայկազն» վիպակը, «Դավիթ բեկ» և «Սամվել» պատմավեպերը նա ստեղծեց ազատագրական ջարժման բուռն վերելքի տարիներին: Այդ ստեղծագործությունները շարունակությունն էին «Խենթի», «Ջալլալէդդինի» և առավելապես «Կայծերի»: Պատմությունը Բաֆֆու համար կենդանի օրինակի արժեք ունեի: «Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ», — ասում է նույն Համրը արդեն «Կայծերում»³⁴: Պատմությունը շարունակվում է ներկայի մեջ և հանգուցվում ապագային:

Բաֆֆին գրեց «Խամսայի մելիքությունները» ուսումնասիրությունը, թարգմանեց «Ղարաբաղի աստղագետը», «Սամվելում» «Փակագծի մեջ» հրատարակեց հինգերորդ դարի ավատական հարաբերությունների գիտական քննությունը: Ամեն բան կատարում էր ժողովրդի փրկության և ազգային անկախու-

32 Տե՛ս Բաֆֆի, Գրականության մասին, էջ 331:

33 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1955, էջ 600:

34 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1956, էջ 471:

թյան նվաճման կողմնացույցին նայելով: Նա ստեղծեց մինչև այժմ չգերազանցված Սամվելի և Մուշեղ Մամիկոնյանի կերպարները՝ սերունդներին հասցնելով պատգամներ, որոնք երբեք չեն խամրելու գալիքի լուսաշողում: Նա հայրենիքի խնդիրը բարձր դասեց ամեն ինչից՝ հույսի ու հավատի ամենախորսնկ թանձրացումներով կապելով սրտերը, վառելով հայրենասիրական այն անշնչ կրակը, որ թանկ է յուրաքանչյուրիս համար:

«Խենթի» հերոսներից երկուսը հանդիպում են ապագայում, երկու հարյուր տարի անց: Սալմանը հին այդ հեղափոխականը, Վարդանին մտաբերել է տալիս. «Հիշո՞ւմ ես... մի անգամ քեզ ասում էի, թե Հայաստանը մարդկության տղայական հասակի օրորոցն է եղել, նրա անմեղության ժամանակների դրախտն է եղել— բայց մի օր կդառնա նրա այրական հասակի, նրա զարգացման ժամանակների դրախտը: Այժմ բոլորը կատարվեցավ»³⁵: Իրականությունը Բաֆֆու ապագայատեսությունը կանխառաջեց շատ ավելի արագ:

³⁵ Բ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 375: